Կազմված է «04» օգոստոս 2015
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
Հասարակական Կազմակերպության
Հիմնադիրների ժողովի որոշմամբ
«04» օգոստոս 2015
Նախագահ
Հ. Սուքիասյան _____

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՉՈՐՍ ՕՐԻՆԱԿԻՑ
Օրինակ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
« » ---------- 2015թ.
Գրանցման N
Վկայականի N
Հարկ վճարողի հաշվառման համար N
Պետական ռեգիստրի գործակալության

պետ՝ պրն. Կ. ԱԴԱՄՅԱՆ _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ժողովրդավարության և երկրաքաղաքական հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, կրճատ անվանումը ԺԵՀԿ (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն է՝ հիմնված իր անդամների շահերի ընդհանրության վրա, ոչ կրոնական, ոչ նյութական պահանջմունքներ բավարարելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, հրապարակայնությունը, անդամության կամավորությունը, իրավահավասարությունն ու ինքնակառավարումը:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, իսկ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության անվանումն է՝

«Ժողովրդավարության և երկրաքաղաքական հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն, կրճատ անվանումն է՝ «ԺԵՀԿ» ՀԿ:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մամիկոնյանց փողոց 36/6 շենք, բն. 14:

հեռ.՝ (+37410) 23-84-70, 093-53-24-57:

էլ. փոստ՝ cdgsinfo@gmail.com

ԲԱԺԻՆ 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կազմակերպության նպատակներն են՝

2.1 նպաստել ժողովրդավարության կիրառական մեխանիզմների ներդրման և գործառնության հնարավորությունների ընդլայնմանը,

2.2 նպաստել հետխորհրդային տարածքում կոնֆլիկտների կարգավորմանը ուղղված տեսական հիմքերի մշակմանը,

2.3 նպաստել քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման և զարգացման գործընթացներին,

2.4 առաջարկել ինտեգրման մեխանիզմներ հետխորհրդային երկրների համար,

2.5 նպաստել Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների խորացմանը,

2.6 նպաստել քաղաքագիտական գիտելիքի տարածմանը և քաղաքագիտության զարգացմանը:

Գործունեության առարկան է՝

2.7 ուսումնասիրել ժողովրդավարության հիմնախնդիրները հետխորհրդային տարածքում,

2.8 ուսումնասիրել գլոբալ և տարածաշրջանային երկրաքաղաքական գործընթացները,
2.9 ուսումնասիրել քաղաքական մշակույթի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները հետխորհրդային հասարակություններում,
2.10 հետազոտել էթնոքաղաքական հակամարտությունները և դրանց կարգավորման հնարավորությունները հետխորհրդային տարածքում,
2.11 հետազոտել ինտեգրման հիմնախնդիրները հետխորհրդային տարածքում,
2.12 ուսումնասիրել Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

Առաջադրված նպատակների իրագործման համատեքստում կազմակերպությունը կարող է իրականացնել՝

- հետազոտական և վերլուծական աշխատանքներ,
- հասարակական կարծիքի ուսումնասիրություն,
- գիտաժողովներ և սեմինարներ,
- քաղաքագիտական հետազոտություններ,
- կազմակերպել և անցկացնել դասախոսություններ,
- քաղաքագիտական խորհրդատվություն:

ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կազմակերպության անդամ կարող են դառնալ Կազմակերպության նպատակներին ու գործունեությանը համակրող, Կազմակերպության գործունեությանն աջակցելու պատրաստակամություն ունեցող, Կազմակերպության կանոնադրության դրույթները ընդունող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության ու արտասահմանյան երկրների քաղաքացիները և երկքաղաքացիները՝ առանց ազգային, սեռական, կրոնական, գաղափարական, քաղաքական հայացքների խտրականության:
3.2 Կազմակերպությանն անդամակցելու ցանկության մասին դիմումը պետք է ներկայացնել Կազմակերպության նախագահին:
3.3 Կազմակերպության անդամի ընդունելության մասին որոշումը կայացնում է Կազմակերպության նախագահը:
3.4 Կազմակերպության անդամության համար սահմանվում է տարեկան վճար 5000 (հինգ հազար) դրամ:
3.5 Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Կազմակերպության նախագահի՝ տվյալ անդամին Կազմակերպության անդամությունից զրկելու մասին որոշման հիման վրա:
3.6 Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից զրկելու մասին որոշման հիմք կարող են հանդիսանալ հետևյալ պատճառները՝
3.6.1 Կազմակերպության անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը:

3.6.2 Կազմակերպության անդամի կողմից Կազմակերպության կանոնադրությանն ու նպատակներին հակասող գործողություններ կատարելը:

3.7 Կազմակերպության անդամությունից դուրս եկած անձը կազմակերպությունում վերաանդամագրվում է ընդհանուր հիմունքներով:

ԲԱԺԻՆ 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամի իրավունքները՝

4.1.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի ընտրել և ընտրվել Կազմակերպության ընտրովի մարմիններում,

4.1.2 Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, բողոքներ և առաջարկություններ,

4.1.3 տեղեկություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,

4.1.4 անարգել դուրս գալ Կազմակերպությունից,

4.1.5 ներկա գտնվել Կազմակերպության ժողովին,

4.1.6 մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,

4.1.7 Կազմակերպության խնդիրներն ու նպատակներն իրագործելու համար օգտվել Կազմակերպության գույքից,

4.1.8 ստանալ Կազմակերպության իրավական, բարոյական, ֆինանսական և այլ աջակցությունը,

4.1.9 Կազմակերպության ղեկավար մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոք ներկայացնել Կազմակերպության ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4.2 Կազմակերպության անդամի պարտականությունները՝

4.2.1 հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

4.2.2 մասնակցել Կազմակերպության աշխատանքներին,

4.2.3 կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

4.2.4 վճարել տարեկան անդամավճարը՝ անդամությունը հաստատելու պահից սկսած 10 (տասը) օրվա ընթացքում: Հետագա յուրաքանչյուր տարվա համար տարեկան վճարը կատարել նախորդ տարվա համար վճարած ժամկետի լրանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում,

4.2.5 բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3. Կազմակերպության անդամը Կազմակերպության սեփականության նկատմամբ սեփականատիրական իրավունքներ չունի:

ԲԱԺԻՆ 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Պետական գրանցման պահից կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ և ձեռք է բերում հասարակական կազմակերպությունների համար օրենքով սահմանված բոլոր իրավունքները:

5.2 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկում՝ ՀՀ և օտարերկրյա արժույթով, կլոր կնիք՝ որում գրված է Կազմակերպության անվանումը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, բլանկ, խորհրդանիշ, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում, կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ:

5.3 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

5.4 ինքնուրույն որոշել իր կազմակերպական կառուցվածքը, նպատակներն ու գործունեության ձևերը,

5.5 տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին,

5.6 ստեղծել լրատվության միջոցներ,

5.7 ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,

5.8 ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

5.9 ձեռք բերել, տիրապետել, օգտագործել, օտարել, տնօրինել օրենքով չարգելված ցանկացած անշարժ և շարժական գույք,

5.10 ինքնուրույն կազմավորել և տնօրինել սեփական ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում ստանալ վարկեր և դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,

5.11 համագործակցել ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ, կնքել համաձայնագրեր, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունն ու իրավաբանական անձի կարգավիճակը,

5.12 իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ:

ԲԱԺԻՆ 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

6.1 ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան յոթ օրացույցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը,

6.2 օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
6.3 վարել իր անդամների հաշվառումը,
6.4 իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Ժողովի հաստատմանը ոչ պակաս քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,
6.5 պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել Ժողովի և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվելու Ժողովի նիստերին,
6.6 օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,
6.7 առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և(կամ) կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,
6.8 առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացույցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

ԲԱԺԻՆ 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպության բարձրագույն մարմինը Ժողովն է:
7.2 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Ժողովին:
7.3 Ժողովը հանդես է գալիս նաև որպես Կազմակերպության վերահսկիչ մարմին և իրականացնում Կազմակերպության գործունեության ընդհանուր վերահսկողությունը:
7.4 Հերթական Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ Կազմակերպության նախագահի կողմից: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակն անցնում է հարյուրի սահմանը, ապա Նախագահի կողմից սահմանված կարգով Ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները: Կազմակերպության արտահերթ Ժողովը հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի պատճառաբանված պահանջով՝ Նախագահի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով, ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:
7.5 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

7.5.1 Կազմակերպության կանոնադրության հաստատումը, նրանում լրացումների և(կամ) փոփոխությունների կատարումը կամ նոր կանոնոդրության հաստատումը,

7.5.2 Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

7.5.3 Կազմակերպության նախագահի ընտրությունը, փոփոխությունը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

7.5.4 Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը, լուծարային հանձնաժողովի ստեղծումը, Կազմակերպության փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը՝ բացառությամբ դատարանի վճռով վերակազմակերպումից և լուծարումից,

7.5.5 ստեղծում և լուծարում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, հաստատում է նրանց կանոնադրությունները,

7.5.6 Կազմակերպության մեկ միլիոն դրամից ավելի արժողության գույքի ձեռք բերման, տիրապետման, տնօրինման և դուրս գրման գործարքների հաստատումը՝ անկախ գույքի տեսակներից:

7.6 Ժողովը իրավազոր է և կարող է հարցեր քննարկել ու որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.7 Ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են հինգ տարուց ոչ պակաս ժամկետով:

7.8 Կազմակերպության նախագահը՝

7.8.1 Նախագահը ընտրվում է Ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով,

7.8.2 ներկայացնում է կազմակերպությունն առանց լիազորագրի,

7.8.3 արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր,

7.8.4 օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում է բանկային հաշիվներ,

7.8.5 ձևավորում է աշխատակազմ և ղեկավարում նրա աշխատանքը,

7.8.6 ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան ընդունում և արձակում է աշխատողներ,

7.8.7 ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում և դուրս գրում կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը՝ անկախ գույքի տեսակներից,

7.8.8 ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում է Կազմակերպության անդամությունից,

7.8.9 կատարում է նաև օրենսդրությամբ չարգելվող այլ գործառույթներ:

ԲԱԺԻՆ 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1 Կազմակերպությունն իրավունք ունի Օրենսդրությանը համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) և հիմնարկներ:

8.2 Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների

օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
8.3 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն ու գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա: Կազմակերպության առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Կազմակերպության անվանումը:
8.4 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքը տրամադրվում է Կազմակերպության կողմից: Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքի արժեքն արտացոլվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ՝ Կազմակերպության հաշվեկշռում և համարվում է Կազմակերպության սեփականությունը:
8.5 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Կազմակերպության կողմից ու գործում են նրա լիազորագրի հիման վրա:
8.6 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պարտավորությունների համար գույքային պատասխանատվություն է կրում Կազմակերպությունը:
8.7 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները ստեղծված են համարվում պետական հաշվառման պահից:
8.8 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները ենթակա են հաշվառման Օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:
9.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ օրենքով չարգելված ամեն տեսակի անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և այլ գույք:
9.3 Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը կազմակերպության սեփականությունն է: Կազմակերպության հիմնադիրները և անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարների) նկատմամբ իրավունքներ չունեն:
9.4 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

9.4.1 անդամների անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,

9.4.2 բանկային և այլ վարկատու կազմակերպություններից ստացված վարկերը,

9.4.3 դրամաշնորհները, բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,

9.4.4 ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ և աղբյուրներ:

9.5 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:
9.6 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
9.7 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
10.2 Լուծարման դեպքում Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետը:
10.3 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1 Խորհրդանիշի նկարագրությունն ու պատկերը կցված է կանոնադրությանը առանձին էջով:
11.2 Կանոնադրությունը բաղկացած է տասը (10) թերթից:

Կանոնադրության անբաժանելի մաս կազմող Կազմակերպության խորհրդանիշի նկարագրությունն ու պատկերը:

Սպիտակ ֆոնի վրա նկարի ձախ վերևի անկյունում երկնագույն գլխատառերով տեղադրված է Կազմակերպության անվանման անգլերեն հապավումը՝ CDGS, մեջտեղում պատկերված է երկրագունդը, որտեղ օվկիանոսները նշված են կապույտ գույնով, իսկ մայրցամաքները սպիտակ գույնով, երկրագնդի պատկերի աջ և ձախ մասերում պատկերված են 3 (երեք) մոխրագույն ճառագայթներ, իսկ երկրագնդի պատկերի ներքևի մասում երկնագույն տառերով գրված է Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումը ՝ Centre for Democracy and Geopolitical Studies.